Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 11-ի N 1239 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՆՎԱՔԱԳՈՒՅՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

NN ը/կ	Մասնագիտությունը, բնագավառը	Հնգօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող (աշխատանքային օր)	Վեցօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող (աշխատանքային օր)
1	2	3	4
1.	Բժիշկ	2	2
2.	Ատամնաբույժ	2	2
3.	Դեղագետ և դեղագործ	2	2
4.	Բուժքույր	2	2
5.	Բուժակ	2	2
6.	Տեխնիկ-քիմիկոս	2	2
7.	Անասնաբույժ	4	4
8.	Գնացքի, էլեկտրագնացքի և լոկոմոտիվի վարորդ	5	6
9.	Մատենագետ, արխիվագետ, արխիվի ֆոնդապահ, արխիվի համակարգչային և թվայնացնող սարքավորումների ապարատավար, լաբորատորիայի վերականգնող, կազմարար և ախտահանող, արխիվի կամ արխիվագիտական ստորաբաժանման ղեկավար, փաստաթղթավար, պոլիգրաֆիական արտադրության, ստորգետնյա արխիվադարանի սպասարկման և կինոարտադրության աշխատողներ ու հարակից մասնագիտությունների մասնագետներ	5	6
10.	Գրադարանավար	5	6

1	2	3	4
11.	Ինքնաթիռների օդաչու և հարակից մասնագետներ	4	4
12.	Ավիակարգավար (դիսպետչեր)	9	10
13.	Ինքնաթիռների երթևեկության անվտանգության տեխնիկ	4	4
14.	Մաքսային ծառայող	4	
15.	Հարկային ծառայող	4	
16.	Քաղաքացիական ծառայող, համայնքային ծառայող	4	
17.	Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող	4	
18.	Քաղաքական պաշտոն զբաղեցնող՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի	4	
19.	Հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող և քաղաքացիական աշխատանք կատարող	4	
20.	Դատախազության աշխատող և դատարանների աշխատակազմերի մասնագետներ, հատուկ քննչական ծառայության աշխատակազմի պետական ծառայող	4	
21.	Լրագրող	4	4
22.	Հայինկասացիայի աշխատող	4	4
23.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և բանկային համակարգի աշխատող	4	4
24.	Ուղեկցորդ երկաթուղու վագոնի, օդանավի և նավի բորտուղեկցորդ	4	4
25.	Վագոնավար հասարակական տրանսպորտի	4	4
26.	Բանվոր, բեռնատար մեքենայի վարորդ՝ զբաղված լեռնային, լեռնահիմնական, շինմոնտաժային և շիննորոգման աշխատանքներում	9	10
27.	Լեռնագործ, բեռնատար մեքենայի վարորդ և բանվոր այլ մասնագիտությունների, ստորգետնյա և բաց եղանակներով օգտակար հանածոների արդյունահանման, պայթեցնող, քարտաշ, քար մշակող և հարակից մասնագետ	9	10
28.	Շինարար-տեղակայորդ և հարակից մասնագետներ	5	6

1	2	3	4
29.	Բանվոր-հարդարողներ՝ զբաղված շինարարական և շիննորոգման աշխատանքներում և հարակից մասնագետներ	5	6
30.	Ներկարար, բանվոր շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման և հարակից մասնագետներ	5	6
31.	Բանվոր և բեռնատար մեքենաների վարորդ՝ զբաղված հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), մետրոպոլիտենների, թունելների և հատուկ նշանակություն ունեցող ստորգետնյա կառույցների շինարարությունում	9	10
32.	Բանվոր մետաղամշակման և մեքենաշինական արդյունաբերության	5	6
33.	Կաղապարող, եռակցող, դարբին, գրտնակիչ, կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի նախապատրաստող և հարակից նախապատրաստողներ, հարակից մասնագետներ	5	6
34.	Գործիքագործ-փականագործ, հաստոցավար, կարգաբերող, բանվոր և հարակից մասնագետներ	5	6
35.	Բանվոր՝ զբաղված արծնապատմամբ, մետաղապատմամբ և ներկմամբ	5	6
36.	Բանվոր՝ զբաղված հղկանյութերի, սինթետիկ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների և բնական ալմաստների արտադրությունում	9	10
37.	Բանվոր գրահրատարակչական արտադրության	4	4
38.	Եռակցող, էլեկտրագազաեռակցող, գազակտրող և հարակից մասնագետներ	5	6
39.	Վերամբարձ կռունկի մեքենավար (կռունկավար) և հարակից մասնագետներ	5	6
40.	Հավաքորդ-փականագործ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրական սարքերի և հարակից մասնագետներ	5	6
41.	Օպերատոր, ապարատավար և մեքենավար քիմիական նյութերի արտադրության սարքավորանքի, նորոգող փականագործ և էլեկտրափականագործ կայանքի, կաթսայական, տուրբինային և շոգետուրբինային սարքավորման, պոմպակայանի, էներգաբլոկի, էլեկտրակայանի և ցանցի, ռադարային համալիրի, մայրուղային ռադիոլոկացիոն համակարգի և հարակից մասնագետներ	5	6

1	2	3	4
42.	Օդային գծերում վերնային աշխատանքներով զբաղված վերանորոգող և էլեկտրացանցերում մալուխների նորոգման ու մալուխային գծերի վրա կապարային կցորդիչներ տեղադրող էլեկտրամոնտյոր-փականագործ	5	6
43.	Հիմնային և թթվային մարտկոցներ լիցքավորող ու սպասարկող աշխատող	5	6
44.	Ծովի մակերևույթից 2000 մետրից ավելի բարձրության վրա աշխատանքներ կատարող ճարտարագիտական-տեխնիկական աշխատող	5	6
45.	Զինվորական ծառայությունից կամ ոստիկանությունում ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված) կամ զինվորական կամ ոստիկանության պաշտոնի կրճատման հետևանքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայող՝ 1) մինչև 15 տարի զինվորական ծառայության ստաժի դեպքում 2) մինչև 15-25 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում 3) 25 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում	4 6 9	
46.	Հայկական ատոմային էլեկտրակայանի աշխատողներ, ովքեր իրականացնում են ստորև նշված աշխատանքները՝ 1) ատոմային էլեկտրակայանների կաթսայատան, տուրբինային (ոչ ռադիոակտիվ շոգիով աշխատող տուրբիններ), նավթային տնտեսության արտադրամասերում (տեղամասերում) էլեկտրաէներգետիկական սարքավորումների և ավտոմատիկայի սպասարկում. 2) քիմիական ռեագենտների՝ ձեռքով պատրաստում և լցավորում, ատոմային էլեկտրակայանների կոնտուրների սնում, կաթսաների, ջերմային ցանցերի ու գոլորշիչների սնման համար ջրի քիմիական մաքրման և աղազրկման գործընթացի վարում, զտիչների վերականգնում՝ թթուներով, աղերով ու ալկալիներով, քլորակրի լուծույթի պատրաստում և դոզավորում ու ցայտավազանների և հովացման համակարգերի ջրի քլորացում. 3) կաթսայատան, տուրբինային (ոչ ռադիոակտիվ գոլորշիով աշխատող), վառելիքի մատուցման արտադրամասերում (տեղամասերում) չափման, հսկման և կառավարման համակարգերի միջոցների (ավտոմատ սարքեր, կարգավորիչներ, տեխնոլոգիական պաշտպանության սարքեր, արգելափակոցներ, ազդանշանային համա-	5	6

1	2	3	4
	կարգեր և այլն) սպասարկում. 4) ատոմային էլեկտրակայաններում նավթի ընդունում և վերամղում. 5) կաթսայատան, տուրբինային (ոչ ռադիոակտիվ գոլորշիով աշխատող) արտադրամասերում (տեղամասերում) շրջայցերի միջոցով ջերմային սխեմաներում փոխարկում, գործող սարքավորումների հսկում. 6) կաթսայատան, տուրբինային (ոչ ռադիոակտիվ գոլորշիով աշխատող) արտադրամասերում (տեղամասերում) կամրջաձև ամբարձիչների վարում. 7) սառը վիճակում կաթսաների մաքրում. 8) տաք վիճակում կաթսաների որմնապատում. 9) ատոմային էլեկտրակայաններում ստորգետնյա ջերմահաղորդիչների ջերմային ցանցերի կառուցվածքների և ջերմավորման մուտքերի սպասարկում. 10) փակ շինություններում տեղադրված դիզելային ու լոկոմոբիլային էլեկտրակայանների սպասարկում և նորոգում. 11) ատոմային էլեկտրակայաններում ջերմատար և ջերմային ցանցերի կառուցվածքների նորոգում. 12) ատոմային էլեկտրակայանների ջերմային ցանցերում կաթսաների և ջերմատարների ջերմամեկուսացման համար երեսապատում. 13) կաթսայատան, տուրբինային արտադրամասերում (տեղամասերում), նավթային տնտեսություններում, թունելներում և ատոմային էլեկտրակայանների ջերմաֆիկացման խցերում գործող էլեկտրաէներգետիկական սարքավորումների ավտոմատիկայի չափման միջոցների, ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի նորոգում և կարգաբերում. 14) ատոմային էլեկտրակայանների (ոչ ռադիոակտիվ գոլորշիով աշխատող տուրբինի) էլեկտրական սարքավորումների, 220 կՎ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու բաց բաշխիչ սարքերի փորձարկում և պարամետրերի չափագրում. 15) ոչ հոսանքատար մասերում առանց լարման հանման օդային գծերի սպասարկում և նորոգում. 16) փայտանյութի հականեխման աշխատանքներ. 17) օդային գծերի և էլեկտրաենթակայանների սարքավորումների նորոգման ժամանակ վերնաշխատանքներ. 18) ատոմակայանների տուրբինային արտադրամասերում (տեղամասերում) մաքրման, շինարարական և վերանորոգման աշխատանքներ		

1	2	3	4
47.	Հայկական ատոմային էլեկտրակայանի աշխատողներ, ովքեր իրականացնում են ստորև նշված աշխատանքները՝ 1) ռեակտորային, տուրբինային (ռադիոակտիվ շոգիով աշխատող տուրբիններ), ռեակտորատուրբինային հատուկ ջրամաքրման արտադրամասերում (տեղամասերում) կամրջային ամբարձիչների վարում. 2) ռադիոակտիվ նյութեր պարունակող ապրանքների նմուշառում և դրանց վերլուծություն. 3) ռադիոակտիվ գոլորշիով աշխատող ջերմացանցային, բոյլերային սարքավորումների սպասարկում. 4) ատոմակայանների հիմնական (առաջին) հաղորդաշղթայի արտադրական շինությունների մաքրում. 5) ռեակտորային, տուրբինային, ռեակտորատուրբինային, քիմիական արտադրամասերում (տեղամասերում) էլեկտրաէներգետիկական սարքավորումների և հիմնական (առաջին) հաղորդաշղթայի օժանդակ համակարգերի սպասարկում. 6) ատոմակայանի հիմնական (առաջին) հաղորդաշղթայի շենքերում գտնվող հատուկ ջրամաքրման և գազամաքրման, օդափոխման, տաք և սառն օդամատակարարման համակարգերի ու շինությունների սպասարկում. 7) ռեակտորային արտադրամասերում (տեղամասերում) միջուկային վառելիքի և մյուս նյութերի, ապրանքների փոխաբեռնման, տրանսպորտատեխնոլոգիական սարքավորումների սպասարկում և նորոգում. 8) ռեակտորային, տուրբինային (ռադիոակտիվ շոգիով աշխատող տուրբիններ), ռեակտորատուրբինային հատուկ ջրամաքրման արտադրամասերում (տեղամասերում) չափման միջոցների հսկման և կառավարման (ավտոմատ սարքավորումներ, կարգավորիչներ, տեխնոլոգիական պաշտպանության, արգելափակման, ազդանշանային և այլ սարքվածքներ) սպասարկում. 9) տուրբինային, ռեակտորային վառելիքի մատուցման արտադրամասերում (տեղամասերում) ռեակտորային, տուրբինային (ռադիոակտիվ շոգիով աշխատող) գործող էլեկտրաէներգետիկական սարքավորումների, ավտոմատիկայի և չափման միջոցների, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի նորոգում ու կարգաբերում. 10) ռադիոակտիվ նյութերով աղտոտված սարքավորումների նորոգում, նյութերի և մասերի մշակում.	9	10

1	2	3	4
	11) ռադիոակտիվ նյութերով աղտոտված գործիք-ների, սարքավորումների, նյութերի և մասերի ընդունում-հանձնում. 12) ռադիոակտիվ նյութերով աղտոտված սարքա-վորումների ու շինությունների ապաակտիվացում, հատուկ արտահագուստի, կոշիկի և այլ անհրա-ժեշտ պաշտպանության միջոցների ընդունում ու մշակում. 13) ատոմակայանի հիմնական (առաջին) հաղոր-դաշղթայի շենքում ռադիացիոն դոզիմետրական հսկողության իրականացում. 14) ռադիոակտիվ մնացորդների հավաքում, տեղափոխում, վերամշակում և թաղում. 15) ատոմակայանի հիմնական (առաջին) հաղոր-դաշղթայի շենքում իրականացվող նորոգման շինարարական աշխատանքներ. 16) տաք վիճակում կաթսաների մաքրում. 17) ենթակայանների, օդային էլեկտրահաղորդ-ման գծերի ու էլեկտրասարքավորումների՝ լարման տակ գտնվող հոսանքատար մասերի սպասարկում և նորոգում		

>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 11-ի N 1239 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԵՐԿԱՐԱՑՎԱԾ՝ 25 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ՝ ՀՆԳՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ, ԵՎ 30 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ՝ ՎԵՑՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ (ԲԱՑԱՌԻԿ ԴԵՊՔԵՐՈՒՄ՝ 35 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ՝ ՀՆԳՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ, ԵՎ 42 ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ՝ ՎԵՑՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ) ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

NN ը/կ	Կազմակերպությունները	Հնգօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող (աշխատանքային օր)	Վեցօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող (աշխատան-քային օր)	Կազմակերպություններում աշխատողների պաշտոնների անվանումները
1	2	3	4	5
1.	Ուսումնական հաստատու-թյուններ, մանկատներ, երեխա-ների բժշկասոցիալական վերա-կանգնողական հաստատու-թյուններ, երեխաների ժամանա-կավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններ, երեխա-ների խնամքի և պաշտպանու-թյան գիշերօթիկ հաստատու-թյուններ, երեխաների խնամքի ցերեկային հաստատություններ	25	30	ղեկավար, նրա տեղակալ, ստորաբաժանման ղեկավար
2.	Հանրակրթական հիմնական ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	35	42	դասավանդող (ուսուցիչ, ուսուցիչ- դաստիարակ), հոգեբան, արատաբան, զինվորական

1	2	3	4	5
				ղեկավար (զինղեկ), երեխաների խնամքի աշխատող, սոցիալական մանկավարժ
3.	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	25	30	նախադպրոցական դաստիարակության և ուսուցման անձնակազմ
4.	Բարձրագույն ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություններ, երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, երեխաների խնամքի ցերեկային հաստատություններ	35	42	դասավանդող (ուսուցիչ-դաստիարակ), հոգեբան, արատաբան, զինվորական ղեկավար (զինղեկ) և երեխաների խնամքի աշխատող
5.	Արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ	25	30	դասավանդող, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական աշխատանքների
6.	Միջին և նախնական մասնագիտական հաստատություններ (քոլեջ, վարժարան, կրթահամալիր, արհեստագործական ուսումնարան)	35	42	դասավանդող, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական աշխատանքների
7.	Արտադրական հիգիենայի, ճառագայթային հիգիենայի, կոմունալ հիգիենայի բաժանմունքներ և բաժիններ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
8.	Համաճարակաբանական, մանրէաբանական, վիրուսաբանական կազմակերպություններ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
9.	Ռենտգենյան, բժշկական ռադիոլոգիական (բոլոր պրոֆիլների) բաժիններ, բաժանմունքներ, կաբինետներ	35	42	բժիշկ, բժիշկ-ֆիզիկոս, ճարտարագետ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող

1	2	3	4	5
10.	Մաշկավեներաբանական հիվանդանոցներ, բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
11.	Տուբերկուլոզային և հակատու-բերկուլոզային հիվանդանոցներ, դիսպանսերներ, կաբինետներ, առողջարաններ	35	42	բժիշկ, բուժքույր, անձնակազմ միջին բժշկական, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
12.	Հոգեբուժական, հոգենևրոլո-գիական բաժանմունքներ, կաբինետներ	35	42	բժիշկ, բուժքույր, միջին բժշկական անձնակազմ, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
13.	Բարիովիրահատարաններ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
14.	Դատաբժշկական փորձագիտական կազմակերպություններ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
15.	Ախտաբանաանատոմիական կազմակերպություններ, բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
16.	Ֆիզիոթերապևտիկ բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
17.	Անեսթեզիոլոգիայի և վերա-կենդանացման, ինտենսիվ թերապիայի բաժանմունքներ, հիվանդասենյակներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
18.	Թարախային բարդությունների համար նախատեսված	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին

1	2	3	4	5
	բաժանմունքներ			անհատական ծառայություններ մատուցող աշխատող
19.	Լաբորատորիաներ (բաժիններ, բաժանմունքներ, կլինիկական, սերոլոգիական, մանրէա-բանական, կենսաքիմիական)	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող, անձնակազմ միջին բժշկական
20.	Քիմիաթերապևտիկ, լազերային, համակարգչային բաժան-մունքներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
21.	Ստորգետնյա առողջա-պահական կազմակերպու-թյուններ, հանքաբուժարաններ, բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
22.	Կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ախտահարումներ (անդա-մալուծություն, կաթված, խուլ-համրություն, տեսողական և խոսակցական ֆունկցիայի խանգարում) ունեցողների հիվանդանոցներ, բաժանմունքներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
23.	Հոգեկան և տարափոխիկ հիվանդների շտապ և անհետա-ձգելի բուժօգնություն ապահովող բրիգադներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող, սանիտարի պարտականությամբ վարորդ
24.	Հոգեբուժական (հոգենյար-դաբանական) բուժկանխարգելիչ կազմակերպություններ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ

1	2	3	4	5
				մատուցող աշխատող
25.	Հոգեկան հիվանդների համար գիշերօթիկ տներ, մտավոր թերզարգացած երեխաների համար սոցիալական ապահովության համակարգի գիշերօթիկ տներ	35	42	բժիշկ, բուժքույր, միջին բժշկական անձնակազմ, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
26.	Հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման կազմակերպություններ, բաժանմունքներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություն մատուցող աշխատող
27.	Սանիտարականխարգելիչ (ինֆեկցիոն օջախներն ախտահանող) կազմակերպություններ, բաժանմունքներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
28.	ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի կազմակերպություններ, հիվանդանոցներ, բաժանմունքներ, լաբորատորիաներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
29.	Տարափոխիկ հիվանդությունների բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող
30.	Նարկոլոգիական կազմակերպություններ	25	30	բժիշկ, բուժքույր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատող

>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ